



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

N _____ 2012 թ.

Ա/Ձ Թամարա Հուսյանին
հասցե՝ ք.Երևան, Գ.Նժդեհ 12, բն. 51
պատճենը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պետ
պարոն Ա.Սարգսյանին

Կից ուղարկվում է Ձեր 10.01.2012թ. գանգատի վերաբերյալ ՀՀ
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի
գանգատարկման հանձնաժողովի 24.01.2012թ. թիվ 3/3 որոշումը:

Առդիր՝ 3 թերթ:

Հարկային մարմնի գանգատարկման
հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 3/3

24 հունվարի 2012թ.

Քննարկվեց Ա/Ձ Թամարա Հուսյանի 10.01.2012թ-ի գանգատը «ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ 15.12.2011թ. թիվ 2110471 ստուգման ակտի դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն «ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պետի 05.12.2011թ. թիվ 2110471 հանձնարարագրի «Օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ Թամարա Հուսյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որն ընդգրկել է 21.10.2010թ-ից մինչև ստուգման ավարտն ընկած ժամանակաշրջանը: Արդյունքում 15.12.2011թ-ին կազմվել է թիվ 2110471 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150 000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ հարկային տեսուչ՝ Գագիկ Գալոյանի կողմից «Հուսյան Թամարա» Ա/Ձ-ին պատկանող ք.Երևան, Աղբյուր Սերոբի 5/1 հասցեում գործող խանութից 09.12.2011թ-ին ժամը 15-45-ին կատարվեց գնում 270 դրամի չափով՝ խաչապուրի, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Ա/Ձ-ի կողմից գումարը չմուտքագրվեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրվեց: Ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այսուհետ ժամը 15-51-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց <Z> հաշվետվություն 11570 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը: <Z> հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 270 դրամը, ժամը 15-52-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և ժամը 15-54-ին նորից դուրս բերվեց <Z> հաշվետվությունը՝ 270 դրամ ընդհանուր գումարով:

Ստուգմամբ պարզվեց, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտվել են «Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները: Արդյունքում տնտեսավարող սուբյեկտին «հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով առաջադրվում է տուգանք 150000 դրամի չափով: Նշված տուգանքը երկամսյա ժամկետում չվճարելու դեպքում կրկնապատկվում է:

Ա/Ձ Թամարա Հուսյանի գանգատում մասնավորապես նշված է.

Խմորեղենի արտադրամասից, որը գտնվում է ք.Երևան Ա.Սերոբ 5/1 հասցեում, 2011թ. դեկտեմբերի 9-ին ժամը 15⁴⁵-ի սահմաններում կաատարվել է առևտուր հարկային տեսուչի կողմից, որից հետո կազմվել է արձանագրություն ՀԴՄ կտրոն չտրամադրելու պատճառով:

Դեկտեմբերի 18-ին փոստով ստացել եմ ամբողջ փաթեթը: Տվյալ դեպքում ես համաձայն չեմ, հետևյալ դրույթներին՝

1. Ձեռագիր արձանագրությունը կազմվել է 02.12.11թ-ին, մինչդեռ ստուգման հանձնարարագիրը տրված է 05.12.11թ-ին:

2. Տեսուչները եղել են ոչ թե 6, այլ 3 հոգի (մինչդեռ արձանագրության և ակտի տակ ստորագրել են 6 հոգի):

3. Ծառայողական վկայականները չեն ներկայացվել, ինչպես որ նշված է ակտում:

4. Չեն համապատասխանում առևտուր անելու ժամերը, ձեռագիր արձանագրության, ՀԴՄ կտրոնի և ակտի հետ:

5. Իրենց կողմից առևտուրը կատարվել է ժամը 15⁴⁵ ին, ոչ թե 270դ ինչպես նշում են իրենք, այլ 690 դրամի (երևում է ՀԴՄ կտրոնում), և տվել են 1000 դրամանոց: Ես իրենց

տվեցի կտրոնը և քանի որ ինձ մոտ մանր չկար, ես դիմեցի մեր աշխատողին, որ իր մոտից մանր տա: Նա գնաց հանդերձարան և իր դրամապանակում ստուգելուց հետո ասաց, որ մանր չունի: Այդ ժամանակ տեսուչը ասաց, որ մանրի փոխարեն խմորեղեն տամ: Ես տվեցի 3 հատ 90 դրամանոց խմորեղեն 40 դրամ մանր և ՀԴՄ կտրոնը տպեցի ոչ թե 270 դրամի, այլ սխալմամբ 570 դրամի, որը համընկավ ժամը 15⁴⁷-ին:

Ես գտնում եմ, որ ՀԴՄ կտրոն տրամադրել եմ ոչ պակաս, քան իրենց կատարած առևտուրը և խնդրում եմ իմ վրիպումը չդիտել որպես խախտում:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), լսելով ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց և Ա/Ձ Թամարա Հուսյանի ներկայացուցչի ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ ստուգումն իրականացվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն, անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Տվյալ դեպքում Ա/Ձ Թամարա Հուսյանի նկատմամբ ընդունվել է ոչ բարենպաստ վարչական ակտ, հետևապես դրանում տեղ գտած տեղեկությունների ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը, ի դեմս ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց:

Իր հերթին <Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, ստուգման ակտում պետք է նկարագրվեն արձանագրված խախտումները, իսկ <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի համաձայն, վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ դրանցում արտացոլված տեղեկությունները, ըստ էության, արժանահավատ չեն և չեն կարող հիմք հանդիսանալ ստուգման ակտով արձանագրված խախտման փաստի ապացուցման համար: Մասնավորապես, ստուգման ակտի 1-ին կետով արձանագրվել է, որ հարկային տեսուչ՝ Գագիկ Գալոյանի կողմից <Հուսյան Թամարա> Ա/Ձ-ին պատկանող ք.Երևան, Աղբյուր Սերոբի 5/1 հասցեում գործող խանութից 09.12.2011թ-ին **ժամը 15-45-ին** կատարվեց գնում 270 դրամի չափով: Այնուհետ **ժամը 15-51-ին** ՀԴՄ-ից դուրս բերվեց <Z> հաշվետվություն 11570 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը:

Միևնույն ժամանակ ստուգման արդյունքներով ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց կողմից **02.12.2011թ-ին** կազմվել է արձանագրություն (այսուհետ՝ արձանագրություն), որում մասնավորապես նշվել է, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պետի 05.12.2011թ. թիվ 2110471 հանձնարարագրի ստուգող անձինք հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման նպատակով այցելել են ք.Երևան, Ա.Սերոբի 5/1 հասցեում գտնվող Ա/Ձ Թամարա Հուսյանին պատկանող խմորեղենի արտադրամաս, որտեղից **ժամը 15-42-ին** կատարվեց 270 դրամի առևտուր, որը Ա/Ձ-ի կողմից չմոտքագրվեց ՀԴՄ և չտրամադրվեց ՀԴՄ կտրոն: **ժամը 15-45-ին** ՀԴՄ-ից դուրս բերվեց <Z> հաշվետվություն, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը:

Վերոգրյալից հետևում է, որ ստուգման ակտում և արձանագրությունում արտացոլված տեղեկությունները չեն համապատասխանում միմյանց, չնայած այն բանի, որ խոսքը գնում է միևնույն գնման մասին: Մասնավորապես, համաձայն ստուգման ակտի 270 դրամի գնումը կատարվել է ժամը 15-45-ին, սակայն ըստ արձանագրության, նույն գնումը կատարվել է ժամը

15-42-ին: Համաձայն ստուգման ակտի <Z> հաշվետվությունը <ԴՄ-ից դուրս է բերվել ժամը 15-51-ին, սակայն ըստ արձանագրության՝ ժամը 15-45-ին:

Հարկ է նշել նաև, որ արձանագրությունը կազմվել է 02.12.2011թ-ին, այն դեպքում, երբ ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պետի թիվ 2110471 հանձնարարագիրը հրապարակվել է 05.12.2011թ-ին:

ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից մշակվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման ընթացքում իրականացվող գործողությունների ընթացակարգ: Մասնավորապես, ՀՀ ԿԱ ՊԵԿ վերադաս հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, հարկային (տարածքային) տեսչությունների պետերին հասցեագրված ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 02.06.2011թ-ի թիվ 01/4-4/134013-11 շրջաբերական նամակի (այսուհետ՝ շրջաբերական նամակ) <ԴՄ ստուգման ակտի բովանդակության տիպային ձև> բաժնում հստակ նշված են <ԴՄ ստուգման ընթացքում կատարվող գործողությունները և ստուգման արդյունքում կազմվող ակտի բովանդակության տիպային ձևը:

Շրջաբերական նամակի <ԴՄ ստուգման ակտի բովանդակության տիպային ձև> բաժնում նշված է, որ խախտման փաստն արձանագրելուց հետո գնված ապրանքները ստուգումն անցկացնող հարկային ծառայողները պետք է ետ վերադարձնեն տնտեսվարող սուբյեկտին, կազմեն համապատասխան արձանագրություն, ինչպես նաև ետ ստանան գնման գումարը և տպեն վերադարձի կտրոնը կատարված վճարման արժեքի չափով:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Թամարա Հուսյանի մոտ իրականացված ստուգման ընթացքում շրջաբերական նամակով նախատեսված ընթացակարգը չի պահպանվել:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Թամարա Հուսյանը ժխտում է իր կողմից ՀԴՄ կտրոն չտրամադրելու հանգամանքը, Հանձնաժողովը գտնում է, որ իրականացված ստուգմամբ, ըստ էության, չի հիմնավորվել Ա/Ձ Թամարա Հուսյանի կողմից ՀՀ Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի պահանջները խախտվելու փաստը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ 15.12.2011թ. թիվ 2110471 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ